

ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Գրող, պետական և հասարակական գործիչ Կարեն Միքայելյանի հրապարակվող նամակներն ուղղված են Հովհաննես Թումանյանին, Արշակ Չոպանյանին, Եղիշ Չարենցին, Կարբին Լեորատունկյանին, Գարեգին Լևոնյանին: Նամակները պարունակում են գրական, պատմագիտական որոշակի արժեք ներկայացնող բազմապիսի փաստեր: Դրանք բացահայտում են նաև հիշյալ մտավորականների կյանքի, ստեղծագործական գործունեության հետաքրքրական դրվագներ:

Նամակները պահվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանկարանում (Հովհ. Թումանյանի ֆ. №№ 908—915, Ա. Չոպանյանի ֆ. №№ 4626—4639, Կ. Միքայելյանի ֆ. №№ 197—200, ՊՇ, 799, Կ. Լևոնյանի ֆ. № 1652):

ՎԱՐԱՋԻԿԱՏ ՎԱՐԻԱՆՅԱՆ

1

16 փետրվարի, 1910 թ.

Մոսկվա

Մեծարգո պարոն Թումանյան

Զստանալով ժամանակին Ձեզ ուղարկած հրավիրաթղթի պատասխանը, «Գարունի»¹ խմբագրությունը պատիվ ունի երկրորդ անգամ խնդրելու Ձեր աջակցությունը, մի կողմից ցանկանալով ունենալ Ձեր մասնակցությունը և մյուս կողմից ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ այմանախին, բացի մի շարք տաճկահայ գրողներից, մասնակցում են ռուսահայ գեղարվեստական գրականության բոլոր ներկայացուցիչները: Խմբագրությունը փափագում է Ձեր անունն էլ տեսնել իր ցանկի մեջ: Թեև տպագրությունը արդեն սկսվում է, բայց ուշ չի լինիլ, եթե մարտի 1—5-ը մի բան մեզ հասցնեք: Մեր ցանկությունն է «Գարունում» տպագրել մեր ժամանակակից հայ գեղարվեստական գրականության լիակատար արտահայտիչը:

Հասցեն. Москва, Большая Димитровка, д. № 9, кв. 47.

Հարգանքը «Գարունի» խմբագրություն

<Կ. Միքայելյան>

2

25 հոկտեմբերի, 1910 թ.

<Մոսկվա>

Հարգելի պարոն Հ. Թումանյան

Թիֆլիս

Թիֆլիս եղած ժամանակս ես խնդրեցի Ձեր աշխատակցությունը «Գարունին»: Մեզ համար առանձնապես ցանկալի է գտնել Բ. դյուբի² ցանկի մեջ ունենալ Ձեր անունը: Տպագրությունը բավականին ուշացավ, եթե նյութ ուղարկելու լինեք՝ ուշ չի լինիլ:

Սպասում ենք:

Հարգանքներով՝ Կ. Միքայելյան

3

24 փետրվարի, 1911 թ.

Մոսկվա

Հարգելի պարոն Զ. Թումանյան

Ձեր՝ Վահան Տերյանին ուղարկած նամակի մեջ խոստացել էիք մինչև մի քանի օր ուղարկել պոեմից մի կտոր «Գարունի» մեջ զետեղելու համար։ Մինչև օրս այդ նյութը չստացանք, չլինի՞ թե կորել է։ Եթե չեք ուղարկել ու մտադիր եք մեզ տալ, ապա խնդրեմ անմիջապես ուղարկեք, այնպես որ, մինչև մարտի 5-ը, հակառակ դեպքում մինչև 10-ը, մեզ հասնի։

Հարդանքներով Կ. Միքայելյան

4

23 օգոստոսի, 1911 թ.

Մոսկվա

Մեծարգո պարոն Ա. Չուպանյան

Փարիզ

«Գարուն» ամսանախի խմբագրությունը որոշել է իր ժողովածուի հերթական, երրորդ, գիրքը հրատարակել քննադատական բովանդակությամբ։ Ի նկատի են առնված և արդեն խմբագրության տրամադրության տակ են գտնվում ուսումնասիրություններ հետևյալ գրողների մասին՝ Խ. Արքայանի, Ս. Շահազիզի, Մ. Նալբանդյանի, Ա. Ահարոնյանի, Ա. Մատուրյանի, Զ. Թումանյանի, Ա. Իսահակյանի։

Խմբագրության նպատակն է ունենալ մի կամ երկու ուսումնասիրություն էլ տաճկահայ, եթե ոչ ղատ-ղատ գրողների, գոնե արդի գրականության մասին բնականոր առամբ։

Այդ տեսակետից խմբադրությունն ամենացանկալին համարեց տեսնել Ձեր անունը իր այդ գրքի ցանկի մեջ, որի համար դիմում է Ձեզ և խնդրում, որ շմերժեք մեզ ուղարկելու մի փոքրիկ ուսումնասիրություն, հակառակ դեպքում մի թուցիկ ակնարկ և կամ նույնիսկ դիտողություններ, տաճկահայ ժամանակակից գրականության մասին։

Հողվածք կարող եք ուղարկել մինչև մի ամիս կամ մի փոքր ավելի։

Սպասելով դրական պատասխանի և լիքը հարգանքներով դեպի Ձեզ՝ «Գարուն» ամսանախների խմբագրության անդամներ՝ Կ. Միքայելյան, Ալ. Պատուրյան, Կ. Կուսիկյան, Յ. Խանդաղյան, Վահան Տերյան։

Հասցե. Moscou, Bolschaja Dimitrovka 9, app. 50, Karen Mikaelian.

5

12 մայիսի, 1915 թ.

Մոսկվա

Հարգելի Հովհաննես Թումանյան

Ինչու հասարակությանը մեր՝ հայերիս, հոգևոր հարստության և ստեղծագործական մտքի հետ ծանոթացնելու նպատակով, այստեղ մտադիր ենք հրատարակել մեկ կամ երկու խոշոր հատոր, ուր տեղ ուիտի գտնեն մեր գրականության փայլուն գոհարները։

Վաճառքից գոյացած արդյունքը պիտի հատկացվի պատերազմի զոհերին:

Այդ նպատակն իրագործելու համար Մոսկվայի Հ<ալկական> կոմիտեն մեր տրամադրության տակ է դրել 10000 ռուբլի: Թարգմանությունները պիտի կատարվեն ռուսական ամենալավ ուժերի ձեռքով: Նույնիսկ արձակ գրվածքները պիտի խմբագրվեն հայտնի արձակագիրների ձեռքով: Տպագրությունը պիտի լինի շատ քիչ: Խմբագրական կազմի մեջ են նաև Վեսելովսկին ու Մատուրյանը: Մոտիկ աջակցություն պիտի ցույց տան Վահան Տերյանը ու Պ. Մակինցյանը: Ամեն ջանք պիտի գործ դնենք աշխատելու լույս ընծայելու:

Բացի մի շարք բանաստեղծություններից և լեզենդներից, Ձեր գրվածքներից մտադիր ենք թարգմանել նաև «Սասունցի Դավիթն» ու «Գիթորը», Սրանցից առաջինը՝ «Դավիթը» որոշել ենք տալ թարգմանելու Բալմոնտին՝ կամ Բրյուսովին:

Սրանով խնդրում ենք Ձեր թույլտվությունը Ձեր գրվածքներից ազատ ընտրություն կատարելու համար:

Ամեն մի ցուցմունք կամ ցանկություն Ձեր կողմից ուրախությամբ կլսենք:

Անկեղծ հարգանքներով՝ ի դիմաց

խմբագրություն.
Կարեն Միքայելյան

Հասցև. Москва, Б. Пешниковский, 4 пер., дом. 10, кв. 304.

6

4 դեկտեմբերի, 1915 թ.
Մոսկվա

Հարգելի պարոն Հովհաննես Թումանյան

Մտադիր լինելով մեր հրատարակելիք «Поэзия Армении» ժողովածուի մեջ մի շարք լուսանկարներ տալու, սրանով խնդրում եմ նամակս ստանալուց անմիջապես մեզ փոխադրեք Ձեր ամենահաջող լուսանկարը վերոհիշյալ գրքի մեջ զետեղելու համար:

Եթե ունենաք Ավետիք Իսահակյանի լուսանկարը, շատ կպարտավորեցեք մեզ ուղարկելով, իհարկե, վերջում Ձեզ վերադարձնելու պայմանով:

Գիրքը համարյա պատրաստ է և հունվարի 2-ին կհանձնենք տպարանին:

Ձեր գրվածքներից առ այժմ թարգմանված պատրաստ են՝ «Գութանի երգը», «Հայոց վիշապը», «Աղավնու վանքը», «Աղջկա սիրտը», թարգմանվում է «Անուշը»՝ լրիվ:

Ձեր նկատողությունները Քույակի և Սայաթ-Նովայի թարգմանությունների նկատմամբ այսօր թուրքիկ կերպով հայտնեցի Բրյուսովին: Այս երկու օրս թերթը կտանձնե և մոտր կկարդամ: Ուրախությամբ հանձն է առնում ամեն մի ուղղում և նկատողություն լսելու: Նրա քարեխղճությանը դեպի սկսած գործը չափ չկա: Բայց, ցավոք սրտի, պիտի հայտնեմ, որ մի շարք պակասություններ թերևս կունենա մեր ժողովածուն, որովհետև շատ շտապ ենք գործն առաջ տանում՝ ցանկանալով գրքի տպագրությունն ավարտել ներկա

մոմենտում: Գրքի ծավալը Բյուրուսովի ընդարձակ առաջաբանով 300 մեծադիր էրևսից ավելի կլինի:

Հարգանքներով՝ Կարեն Միքայելյան

Հասցե. Москва, Б. Гнезниковский, пер. 10, кв. 304.

7

6 դեկտեմբերի, 1916 թ.

Երևան

<Հովհ. Թումանյանին>

Ձեզանից բաժանվելուց հետո մինչև օրս երևանի նախագում եմ: Շրջում էի տեղիս որբանոցները, Երկու նույնատակ ունեի: Նախ՝ գրի առնել տաճկահայերի վերջին ողբերգությունն ըստ մանուկների պատմածների և դրանց հիման վրա գրել գեղարվեստական երկեր, չդուրս գալով նյութի սահմաններից:

Երկրորդ. հավաքել երեխաների՝ ինձ համար միանգամայն անսպասելի կերպով երևան եկած պրական արտահայտությունները: Այժմ ձեռքիս տակ ունիմ մի մեծ գրականություն: Այդտեղից ընտրել եմ բանաստեղծական գրվածքներ, որոնց մեջ կան հաճախ շատ հաջող կտորներ, Այդ կտորները իրենց մեջ արտացոլում են վերջին դեպքերը: Շատ հետաքրքրական և սքստառու է, թե ինչպես է երգում երեխան իր վիշտն ու ուրախությունը, իր կրած տանջանքները, իր տեսած արտասուքները:

Այստեղի նորակաղմ Գեղասիրաց ընկերության¹ առաջին երեկոյին ես մի դասախոսություն արի:

Ա մասում խոսեցի որբերի աշխատասիրության, արհեստի և արվեստի մասին և կարդացի նրանց գրվածքները:

Բ մասում կարդացի մի բանի արդեն մշակած պատմվածքներ՝ ի նկատի ունենալով դասախոսությանս թե՛ Ա, և թե՛ Բ մասի զարկնցրած հետաքրքրությունը, ես ավելորդ չհամարեցի ընդունել դասախոսություն<ը> Թիֆլիսում կրկնելու համար ընկերներիս տված խորհուրդը:

Բացի այդ, ինձ շահագրգռում է մի հանգամանք ևս:

Որովհետև որբերի մեջ կան բազմաթիվ արտաքու կարգի ընդունակ երեխաներ՝ իմ դասախոսությունների միջոցով ես ուզում էի կոչ անել հաստատության<ը>, որ հիմնվի մի ֆոնդ այդ երեխաների ընդունակությունները կատարելագործության հնարավորություն տալու համար:

Այդ ֆոնդն անույնան պիտի գտնվի Հ<այ> գրողների ընկերության մեջ և պիտի կառավարի:

Այստեղ դասախոսությունս լսելուց հետո մի անծանոթ վաճառական մոտեցավ ինձ և զգացված առաջարկեց օգտվել իր նյութական միջոցներից այդ գրվածքները հրատարակելու համար:

Ինձ թվում է, եթե կոչ անեի իմ դասախոսության մեջ՝ կգտնվեին և այնպիսիները, որոնք իրենց դրամով կմասնակցեին և այդ ֆոնդին: Համենայն դեպս, եթե հարմար եք գտնում ես կցանկանայի Հ<այ> գրողներին առաջիկա էրեկոյներից մեկին դասախոսել:

Որովհետև ես ճանապարհի վրա եմ և Թիֆլիս Երկար չեմ մնա, ինձ համար միակ հնարավոր օրը պիտի լինի ամսույս 12—18 մեջ:

Դեկտեմբերի 11—12-ին կլինեմ Թիֆլիս:

Այժմ ես գնում եմ Ալեքսանդրապոլ:

Այնտեղի հասցեն. Католическая 20.

Հնդունեք հարգանքներս՝ Կարեն Միֆայելյան

8

11 հունվարի, 1917 թ.

Բաթու

Հարգելի պարոն Հովհաննես Թումանյան

Մի նամակ էլ Թիֆլիսից էի գրել, ուր տվել էի նվիրատուների ցուցակը. բայց հետո հիշեցի, որ մի 50 ռ. նվիրատուի ազգանուն և անուն բաց եմ թողել—դա Արատ Կրիդյանն է:

Երեկ Տ. Հովհաննեսյանի¹ մոտ, ճաշի ժամանակ, մի շարք մարդկանց ներկայությամբ հայտնեցի Ձեր ընկերության մասին և հիշեցի այն գումարը, որ դուք ասացիք: Մեծ տպավորություն արեց: Խմեցին Ձեր կենացը, դասախոսությունս կրկնում են կուրբի դահլիճում, հույս ունեմ նյութական արդյունքը լավ պիտի լինի: Առաջինին փակ բնավորություն էի տվել: Ես հարմարություն չունեցա Ձեզ պատմելու մեր թարգմանական գրականության մասին, Վահանը² Երևի կուստմի:

Հարգանքներով՝ Կարեն

9

25 հունվարի, 1917 թ.

Մոսկվա

Հարգելի պարոն Հովհաննես Թումանյան

Բաքվից հեռանալիս խնդրեցի պ. Մխիթար Տեր-Անդրեասյանին¹, որ Ձեր անունով փոխադրի հօգուտ «Պրոբգիրների ֆոնդին» ստացած 292 ռ. 15 կ. Դրանից 192 ռ. 15 կ. մնացել է իբրև արդյունք իմ կարդացած դասախոսությունից հետո, իսկ 100 ռուբլին ստացա Միք<այել> Բաղդադյանից:

Ես իմ հույսը դրի հայ գրողների ընկերության վրա, որ հօգուտ ֆոնդին որևէ կոչ կանի: Բայց մինչև օրս, ահա մի ամիս է անցնում, ոչ մի քայլ չարավ և այդ հարցը բնեց:

Այսօր «Մշակին» մի փոքրիկ հաշիվ եմ ուղարկում ստացածս գումարների: Լավ կլիներ, որ Դուք էլ Ձեր կողմից «Հորիզոնում» տայիք: Իմ և տիկին Զապելի գրվածքների տպագրության հարցը չլիտեմ ինչպես եղավ, բայց մինչև օրս լուր չեկավ: «Лосзия Армении»-ից մի երկու օրինակ ուղարկեցի Ձեր հասցեով, որ մեկը տաք պ. Դերենիկին², մյուսը՝ օրիորդ Լեյլինին³, նեղության համար ներողություն եմ խնդրում 5 ռուբլիանոց օրինակները (2400) արդեն սպառվել են: Այժմ ծախում են 3 ռուբլիանոցը (2400 օր) 5 ռուբլով, որ գուցե նույնպես շուտով սպառվի: Երկրորդ տպագրության հարցն է դրված:

Խնդրում եմ Ձեր գրվածքների, ինչպես նաև մյուսների, թարգմանությունների նկատմամբ Ձեր բոլոր նկատողությունները գրի անցկացնեք, որ-

պեսզի հնարավորություն ունենանք երկրորդ տպագրության ժամանակ ի նկատի ունենալ:

Իմ կողմից բարեւք օրիորդ Նվարդին¹, շատ կցանկանալի իմանալ ի՞նչ դրություն մեջ են որբերի լուսանկարները, որոնց պատրաստության նեղությունը հանձն առավ օրիորդը: Պարոն Թումանյան, դուք խոստացաք ինձ մի մանրամասն գրություն ուղարկել: Ձեր լինելիք կուտուրապաշտպան ընկերության մասին, հնդրեմ շմոռանաք: Իմ առհասարակ կարող եմ այդ մասին իբրև կատարված փաստի խոսել:

Հարգանքներով և բարեկերով՝ Կարեն

10

30 սեպտեմբերի, 1926 թ.

Սիրելի պ. Ա. Զուպունյան

Սաստիկ ցավեցի, որ նախքան Ձեր Լամերիկա մեկնելը չկարողացա տեսնել, իսկ հասա փարիզ Երեկոյան և հետևյալ առավոտյան բժշկի հետ անցանք Ձեզ մոտ և կոնսիրվը հայտնեց, որ նոր մեկնեց Լամերիկա: Մինչդեռ խոսելու շատ բան ունեի:

Մեր վերջին մտադրության մասին, փոխան հանգանակության² բաժնետիրական ընկերություններ: Թեքեճյանն¹ ու Թերզյանն² Ձեզ կարոտում են: Կպատմեն նաև տեղական մյուս գործերից:

Այստեղ եղած ժամանակս մի երկու: անգամ կրթական հիմնարկության վարչության անդամների հետ խորհրդակցություններ ունեցանք այն իմաստով, որ այսուհետ հրատարակեն ավելի արժեքավոր և մնայուն գրքեր, բանի որ Հայաստանն այդ անելու հնարավորություն չունի:

Ի միջի այլոց, խոսեցիք նաև միջնադարյան բանաստեղծների գործերի հրատարակման մասին:

Կարապետ Կոստանյանն³ ունի նրանց հավաքածուն, մոտ 1200 երես, իբրև ձեռագիր շատ լավ կլիներ, եթե Ձեր խմբագրությամբ այդ հավաքածուն հրատարակվեր:

Ձեմ հիշատակում նաև Ձեր ֆրանսիական հրատարակության մասին, որ նմանապես պիտի համարել այն մնայուն գործերից, որ պիտի հրատարակի կրթարանը:

Դժբախտաբար, պ. Փուշմանին⁴ չտեսա և չկարողացա այդ հարցերի մասին նրա հետ խոսել: Կարծում եմ, որ դուք իմ այդ առաջարկությունների հետ պիտի համամիտ լինեք և հետևապես ինչ հարկավոր է դուք պիտի խոսեք նրա հետ:

Նրան տեսնելուց շմոռանաք խոսել նաև հրիմյան Հայրիկի ֆոնդի (10000 դ.) գործադրության մասին: Խնամակալության մյուս բոլոր անդամների հետ ես խոսել եմ և բոլորից ունեմ համաձայնություն այդ ֆոնդը գործադրել այժմ Հայաստանում: Վերջին խոսքն այժմ պատկանում է Փուշմանին:

Կրկին ցավեցա, որ նախքան Ձեր Լամերիկա մեկնելը չկարողացա Ձեզ հետ տեսնվել: Իսկապես խոսելու շատ բան կար: Բայց ինչ արած: Ցանկանում եմ ձեզ հաջողություն...:

Բարեկիր իմ կողմից մեր ընդհանուր բոլոր ծանոթներին, մասնավորապես Խեքեճյանին և Թերզյանին:

Մնամ Ձեզ հարգող՝ Կ. Մխալեյան

Մինչև նոյեմբերի 1-ը այստեղ եմ: Ինձ նամակ գրելիս՝ միշտ նույն հասցեն՝ 59 rue Charden-Lagache, Paris.

11

10 նոյեմբերի, 1926 թ.
Փարիզ

Սիրելի պ. Ա. Չուպանյան

Պիտի զարմանաք, որ մենք դեռևս Փարիզումն ենք: Վերջին աղետը՝ հարկադրեց մեզ ավելի երկար մնալու, օգնության պործը կազմակերպելու համար:

Այդ մեզ հաջողվեց այստեղ: Բոլոր հասարակական կազմակերպություններից հիմնեցինք մի միացյալ կոմիտե Պողոս Նուսյար փաշայի նախագահությամբ և դիմեցինք հանգանականության, որի արդյունքն է արդեն 1.300000 ֆրանկ:

Մի հեռագիր էլ ուղարկեցինք Նյու Յորք, որ նույն ձևով մի միացյալ մարմին էլ այնտեղ հիմնեն: Չգիտեմ հաջողվեց, թե ոչ, և՛ղետը շատ մեծ է, քան լրագրերում գրածը: Վերջերս, որ Ռակովսկին եկավ Մոսկվայից այդ է ասում: Նույնը գրում են Հայաստանից գրած մասնավոր համակներում: Հայաստանի բարեկամ կազմակերպություններն այդ լավ պիտի ըմբռնեն, նախասիրությունները մի կողմ գնեն և Հայաստանին դրակալն կամ ավելի միշտ ասած նյութակա՛ն օգնություն հասցնեն:

Ձեր անգլիական թերթերին տված ինտերվյուն հաճույքով կարդացի: Կուղարկեմ և՛. Հայաստանին, որ իրեն հարմար պահին, լուր տան... Իսկ ինչ վերաբերում է իմ ինտերվյունին մասնավորապես «Ապագայի» մեջ, կարող է պատահել, որ այնպես տպած չլինեն (ես չեմ հիշում), սակայն այդ մտքերը, որ ես հայտնել եմ իմ ստորագրությամբ «Նրևանի» մեջ հաստատում եմ և ամեն մի խոսքին պատասխանատու եմ: Այսպես դուք պրոմ եք, որ իբր թե ես ասած լինեի, որ «Հայ նպարավաճառները սևերու մոտ կաշխատեն», Իրավ որ, զժվար թե այդպիսի արտառոց միտք հայտնած լինեմ: Իսկ ինչ վերաբերում է նոր սերնդին այդտեղ ծնված, օտարացումեն, որի դեմ դուք առարկում եք, համարում եմ, որ Ձեր ստացած տպավորությունները դեռևս լրիվ չեն:

Ուսումնասիրեցեք ավելի մոտիկուց: Ինչո՞ւ պիտի երազներով կերակրվենք: Այդ սերունդը պիտի կորչի, ինչպես կորցնում են մեզանից կուլտուրապես ավելի բարձր ժողովուրդներ՝ ֆրանսիացիք և գերմանացիք:

Գոհարավաճառների քանակը, ինչպես ես բերել եմ իմ հոդվածի մեջ, միայն 6 հայաշատ քաղաքների մեջ 373—միշտ էլ, և՛ոն ամերիկահայ տարեգիրը և ստուգեցեք:

Պարթենի(ն) տեսնվել էմ վերջին անգամ և ես նրան ոչ մի խոստում չեմ տվել նամակ գրելու, ընդհակառակը, ինքը խոստացավ առաջարկային* անել մեզ, որ մենք կառավարությանը հանձնենք այն որոշումը, որ նրանք պիտի հանեն դե Ռեկսի վերադառնալուց հետո (նա նույն ժամանակ գտնվում էր Բելգիայում): Եվ մենք սպասում էինք նրա առաջարկին: Երևի մոռացել է, չեմ մեղադրում, ծեր մարդ է:

Ներեցեք, որ նամակս պոլեմիկայի ձև ստացավ: Ստիպված էի պատասխանել Ձեր «մեղադրանքներին»: Տանկանում եմ Ձեզ հաջողություն:

Ինձ կարող եք գրել Փարիզի հասցեով (59 rue Charden-Lagache).

Տիկնոջս պահում եմ առաջմ ալստեղ, մինչև որ ես այնտեղ բնակարան գտնեմ: Բարեկիր պ. Նազարին, Փափազյանին, Թեքեճյանին և մյուս բոլոր ծանոթ բարեկամներին և նույնը ընդունեք Դուք:

Ձեզ հարգող Միխայելյան

12

31 դեկտեմբերի, 1928 թ.

Մոսկվա

Մեծարգո և սիրելի բարեկամ Ա. Չուպանյան

Փարիզ

Մեծ շնորհակալությամբ կարդացի «Ապագայի» մեջ Ձեր գնահատական-գրախոսականը իմ «Մաժեստիկ» գրքի մասին:

Այս տարի, մինչև գարուն, մտադիր եմ երկու գիրք ևս լույս ընծայել: Մեկը «Հերազ բաջին» պետական հրատարակությամբ, մյուսը՝ իմ պատմվածքների ժողովածուն (4-րդ գիրք)՝ «Հերմես» ընկերության հրատարակությամբ:

Շատ հետաքրքրական է ինձ իմանալ, թե ինչ գրական աշխատանքներով եք այժմ զբաղված: Արդյո՞ք հաջողվեց Ձեզ լույս ընծայել Ձեր «Rostie» 3-րդ գիրքը, շատ ցավալի կլիներ եթե նորից դրա հրատարակության գործը ձգձգվեր:

Այնուամենայնիվ ներկայումս գրական մեծ արժեք կունենար մի ժողովածուի՝ հատարակությունը, ուր կմտնեին մեր միջնադարյան բանաստեղծությունների և աշուղական ստեղծագործությունների հատընտիր կտորները: Այն հետաքրքությունը, որ այժմ ամեն տեղ կա այդ երկու գրականությունների շուրջը, միանգամայն պիտի ապահովի նման հրատարակության հաջողությունը: Դ. Ի. Բ. այդ գրականությանը քաջ ծանոթ եք: Ունեք կիրթ ճաշակ, ափսոս լինե, , որ Ձեր աշխատանքների բնագավառից այդ գործը դուրս մնար: Կարապետ Կոստանյանի մի ձեռագիր հավաքածու կա, որի մասին քանիցս պատմել եմ Ձ. գ. Դժբախտաբար Կոստանյանը լինելով բարեխիղճ աշխատող, դուրկ էր հրակ ձեռնակից, այդ իսկ պատճառով նրա հավաքածուն գեղար-

* Այդպես է տեղ. տրամ (Վ. Վ.):

վհատական ցանկալի արժեք չունի, որպեսզի կարելի լիներ անփոփոխ հրատարակել:

Այսքան զրականության մասին Այժմ գանք մեր... լուսավորական գործերին:

Ես այժմ աշխատում եմ Մոսկվայում, հորհրդային Միության մեջ աշխատող կարմիր խաչերի և կարմիր մահիկների միության կենտրոնական գործադիր կոմիտեում: Մի շարք խոշոր ձեռնարկություններ ենք մշակում Հայաստանի համար, որոնց մասին կգրեմ ապագայում: Մասնավորապես մեր կազմակերպությունը շահագրգռված է արտասահմանից սպասվող աջակցությամբ (նպիտակություններ, կտակներ և այլն):

Նորերս մենք իմացանք Սանասարյան¹ դատավարության մասին Կ. Պոլսում: Լուրերը լրացրական էին: Քանի որ այդ հարցով շահագրգռված ենք նաև մենք, ինձ շատ անհրաժեշտ է ունենալ մանրամասն տեղեկություններ այդ դատավարության մասին, որ ներկայացնեմ իմ կազմակերպությանը: Մասնավորապես ինձ հետաքրքրում է իմանալ Ձեր կարծիքը, թե ինչով կարող ենք օգտակար լինել մենք:

Պ. Նորատունկյանի² հետ քանիցս այդ հարցի մասին խոսած ժամանակ նա շեշտում էր, թե լավ կլիներ հորհրդային Միության կառավարության միջնորդությունը այդ գործին: Քանի որ այդ գործի զեյազույն իրավատերը Լեմհնայն հայոց կաթողիկոսն է և քանի որ վերջինս ապրում է Միության սահմաններում:

Ես շատ կուզեի գիտենալ նրա կարծիքը այս վերջին խնդրի մասին և ներկա դատավարության շուրջը: Կխնդրեի Ձեզ այդ հարցի մասին տեսակցվելիք հետը և գրեիք Ձեր կարծիքը:

Իմ համոզումով, իրավական հող հղած տեղում, մեր Միության կառավարությունը պետք է որ կարողանա միջնորդել: Միայն հարկավոր է նյութ մատակարարել, որպիսին կարող եք անել դուք:

Առայժմ այս նամակը ևս Ձեզ գրում եմ անձնական հանգամանքով: Խնդրում եմ այդ ի նկատի ունենաք թյուրիմացություններից խուսափելու համար: Հետագայում, հարկ եղած դեպքում, դուք կստանաք, իհարկե, պաշտոնական դիմումներ: Իմ սիրտը ցավում է, որ կարող է մի այսպիսի մեծ հասարակական հարստություն կորցնենք մեր անփութության պատճառով:

Կարծում եմ, որ նոր ուղղագրությամբ պիտի կարողանաք կարգալ նամակս: Վարժվել ենք, հնով համարյա ղժվարանում ենք գրել: Ընդունիր բարեներս և նույնը հաղորդիր հարգելի պ. Գ. Նորատունկյանին:

Ձեր շուտափույթ նամակին սպասող՝

Կարեն Միքայելյան

Ենթադր նորի տարի:

Հասցե. Moscow, Brjusovsk per. 2 і kw. 21.

Սիրելի բաւեկամ Ա. Չուպանյան

Սանասարյանի գործի առիթով Ձեր գրած երկու նամակները ժամանակին ստացած եմ շնորհակալությամբ: Այդ գործը միութենական կարմիր խաչին,

ուր ես այժմ աշխատում եմ, շատ է հետաքրքրում և կուղենար որևէ կերպով օգտակար լինել, բայց ձեր դեռևս չէ գտած, Այդ առիթով աշխատում է անգամ հատուկ հանձնաժողով՝ շատ նշանավոր ոուս փաստաբաններից բաղկացած, Մենք ձեռք բերինք բոլոր փաստաթղթերը այդ գործի համար, Մեր ձեռքի տակ ունինք Սանասարյանի կտակը, կանոնադրությունը, Կա և կաթողիկոսի համաձայնությունը այդ գործի միջամտության համար հօգուտ հորհրդային Հայաստանի, Սակայն իրավահաս փաստաբանների կարծիքով կտակի թելադրությունը կաթողիկոսի միջամտության համար շատ թեթև է, Կտակի մեջ ասված է միայն, որ Սանասարյան վարժարանը դրվում է Ամենայն հայոց կաթողիկոսի հայրական հովանավորության տակ, Այդ հայրական հովանավորությունը կարող է լինել կրոնական իմաստով և կարող է չհասկացվել դատարանական շրջաններում իրավական պատկանելության իմաստով, Ահա որտեղ է կտակի թույլ կողմը միջամտության համար, Այդ տեսակետից էր, որ մենք ուզեցինք Ձեզանից խորհուրդ իմանալ, Աջակցելու պատրաստակամություն կա, միայն իրավական հիմնավորում է հարկավոր, Մենք հույս ունենք, որ սովետական իշխանությունը հարցի լավ ձևակերպման դեպքում կարող է մեզ աջակցել, Արդյո՞ք այդ կայքը ճանաչված է տաճկաց կառավարության կողմից իբրև սեփականություն պատրիարքության, ինչ գրությամբ և եթե այո, ապա պատրիարքը որ շափով հանդիսանում է կաթողիկոսի ենթակա պաշտոնյան, նոր խնամակալություն նշանակելու և այդ նոր խնամակալությունից պահանջելու, որ իր իրավասության տակ գտնված կայքի հետ այնպես վարվեն, ինչպես կաթողիկոսն է հրամայում, Ահա խնդիրներ, եթե կարող եք և նեղություն չի լինի Ձեզ համար, խնդրեմ պարզեք և մեր հիմնարկության անունով ուղարկեք ինձ հետագա քայլերին դիմելու համար:

Նմանապես խնդրում եմ, որ այս գրածներս համարեք իբրև կոնֆիդենցիալ գրություն և հանուրի սեփականություն չդարձնեք:

«Անահիտ» հրատարակության մտադրությունները միայն կարող եմ ողջունել, Ժամանակին նա դեր է կատարել և այժմ էլ կարող է այդ դերը կատարել, Միայն Հայաստանի գրողների մասնակցության նկատմամբ ուրիշների հայտնած օպտիմիստ կարծիքը ես չեմ բաժանում, Իմ կարծիքով այդ տեսակետից մեծ ակնկալություններ չպիտի տածեք, ինչ վերաբերում է ինձ, ես ուրախությամբ կաջակցեմ:

Ինչ վիճակի մեջ է գտնվում փարիզահայ տան կառուցման խնդիրը, Շինությունը սկսված է, թե ոչ, եթե ոչ, ապա ի՞նչ գումար կա այժմ Ձեր տրամադրության տակ:

Հիշում եմ, որ ակնեցիները ցանկանում էին, ձեր առաջարկի համաձայն, մի գյուղ ևս շինել, Ինչքան գումար է հավաքված, եվ եթե մեր միութենական կարմիր խաչը Ձեր այդ ձեռնարկին կես առ կեսով մասնակից լինեք—խրախուսելու համար նա իր տրամադրության տակ որոշ գումարներ ունի—ինչպիսի գումար կարող կլինեիք հավաքել:

Սպասելով Ձեր նամակին, խնդրեմ բնղունեք իմ սիրալիր բարեններս:

Ձեզ հարգող Կարեն Միքայելյան

Այս նամակի պատասխանը խնդրեմ գրեք կարմիր խաչի հասցեով.

Alliance des Sociétés de la Croix et du Croissant Rouges de l'URSS I Tverskaja (Yamskaja) 1/3 Pour K. Mikaellian, Moscou.

Լրաթի 2—7

Սիրելի բաւեկամ Ա. Չոպանյան

Շնորհակալությամբ ստացա «Անահիտի» № 2-ը, № 1-ը դժբախտաբար ձեռքս չընկավ, երևի ճանապարհին կորել է: Նախ շնորհավորում եմ Ձեզ, Ձեր երազած հանգեսի վերահրատարակությունը: Ցավում եմ, որ առաջին համարը չունենալով չեմ կարող իմ վերջնական կարծիքը հաղորդել Ձեզ: Համենայն դեպս, ընդհանուր տպավորությունը նպաստավոր է, պակասում է միայն մի բան, որ անշուշտ Ձեզանից չէ կախված, այլ արդյունք է հեռավոր տարածության և օտար միջավայրի, չի զգացվում հայրենի երկրի զարկերակի բաբախումը: Ավելի շուտ գիտական-տրամաբանական հանգեսի տպավորություն է թողնում, քան կենդանի գրական-հասարակական ամսագրի, մի բան, որ, բնականաբար, հատկանշական է մեր բոլոր գաղութային հրատարակություններին: Համենայն դեպս, Ձեր գործը կուլտուրական մեծ ձեռնարկություն է, որ անհրաժեշտ է շարունակել:

Ցավում եմ, որ հնարավորություն չունիմ անտիպ աշխատասիրությամբ մասնակցել Ձեր հանգեսին, թերևս կարելի համարեք իմ տպագրված կամ տպագրվող գործերի արտատպությունը, որ ավելի ընդունելի է ինձ համար:

Այսօր փոստով ուղարկում եմ Ձեզ իմ հերթական հրատարակության մի օրինակը, որ կրում է «Գույների կոփվր» վերնագիրը: Ինչ հավաքածու է իմ մի շարք պատմվածքների, որոնցից շատերը լույս են տեսել իմ «Ձմռան երեկո» և «Մածեստիկ» գրքերիս մեջ ընկած ժամանակամիջոցում՝ զանազան պարբերականներում: Շատ ուրախ կլինեի Ձեր անաչառ կարծիքը լսելու: Նորերս միութենական կարմիր խաչերի նախագահների խորհրդակցությունն էր, այստեղ էր և Կամսարականը¹, որ խնդրեց Ձեզ նամակ գրելիս հաղորդել իր բարենբրը: Ես շարունակում եմ աշխատել միութենական կարմիր խաչում: Ինչպարանս փոխել եմ, նոր հասցես այժմ այսպես է. ցանկալի է, որ գրեք ուսերեն տառերով: Moscou, центр, Сверчков пер. 10, кв. 4, К. Микаэлян.

սրտագին բարեններով Կ. Միխայլյան

Moscou, centre Svertchkow per. 10, kv. 4, K. Mikaelian.

15

8 հուլիսի, 1930 թ.

Մոսկվա

Սիրելի Չարենց

Մի՞թե խոստումդ մոռացար: Ո՞ր մնացին այն գրքերը, որ պիտի ուղարկեիր ինձ:

Ձի կարծես դյուրահավատությունն իմ:

Այս իբրև նախաբան:

Այժմ լուր այլ առակ:

Գիրքս, որ ուսերեն լեզվով հրատարակեցի, շատ շուտ տարածվեց: Հետո իմացա, որ լավ օտգիվ է եղել: Ինչ օտգիվ-ը կարդալով մի միտք հղացավ իմ մեջ: Առաջարկել պետհրատին, որ նա հրատարակի մի ժողովածու,

ուր զետեղված լինեն իմ այն պատմվածքները, որոնք արտացոլում են 1905 թվականի պաթոսն ու հետհեղափոխական ոեակցիան, այն մոմենտները, որոնք շեշտված էին նարկոմպրոսի հանձնարարության մեր հրատարակված վերահիշյալ օտդիվի մեջ:

Պետք է ասել, որ 1907 թվականին հրատարակված իմ ռեկլանսի հույզերս ժողովածուն լայն տարածություն չունեցավ, նախ՝ որովհետև ժամանակի տիրող դաշնակցական քննադատությունը սառը վերաբերմունք ցույց տվեց, երկրորդ, որովհետև տիրաժի խոշոր մասը պատահարի զոհ գնաց:

Այս ծրագրած ժողովածուի համար, մի քանի պատմվածքներ շտկելուց հետո, հետևյալ ցանկը կկազմեն.

1. Հացթուխ Սիմոնը
2. Եվուլլա
3. Մարտակոչ
4. Մակարը—անտիպ, 1905 թվի արձապանքներ
5. Մահակ Թումանը
6. Գույների կոիվը
7. Կեցցեն հաղթվածները
8. Փորձության ժամին
9. Հայ-թուրքական պատերազմը
10. Երազը վանքում
11. Էրֆուրի ծրագիրը
12. Վարդանանց պատերազմը
13. Վերջին հորձանքներ
14. Նահանջ

15. Կարմիր մեխակներ—անտիպ, դրամատիկական էտյուդ երկու գործողությամբ, հետհեղափոխական ոեակցիայի տրամադրություններ, խաղացված է 1914 թ.: Ընդամենը մոտ 15 տպագրական թերթ: Դա կլինեն մի ամբողջություն, որի առանցքն է 1905 թվի հեղափոխությունն, կրնորոշի այդ և դրան հետևող ժամանակաշրջանը: Ցանկալի կլինեն մի կարող մարդու առաջաքան:

Ի՞նչ ես կարծում, կարող կլինեմ մի այդպիսի առաջարկ անել պետհրատին, կրնդունվի՞ այդ առաջարկը և ի՞նչ է առհասարակ քո կարծիքը այդ մասին: Խնդրում եմ զահմաթ չլինի մի այդ մասին ինձ գրի:

Սպասելով քո պատասխանին

մնամ քո Կարեն

Սիրելի պ. Ա. Զոպանյան

Նորերս Մոսկվայում կայացավ հորհրդային Միության ժողովուրդների պրվեստների և թատրոնների համամիութենական առաջին օլիմպիադը, 14 լեզվով, ի թիվս որոնց և Հայաստանի պետական թատրոնը, 10 կինոկազմակերպություն և 8 երգչական նվագական խմբեր: Դա հորհրդային Միության ժո-

ղովուրդների արած նվաճումների մի սքանչելի ցուցահանդեսն էր կուլտուրական ասպարեզում: Շահեկան եմ գտնում քաղաքական և պատմական նշանակություն ունեցող այդ երևույթի հետ ծանոթացնել և արտասահմանի մեր զաղութայնությանը, «Խորհրդային Հայաստանին» ուղարկելիք հոգվածաշարքս վերջացնելուց հետո մտադիր եմ, մինչև մեկ շաբաթ, մի ընդարձակ հոգված էլ ուղարկել «Անահիտի» համար, որին կկցեմ և մի շաբթ նկարներ: Զեր մասագիրը խմբագրելիս առաջիկա համարի համար խնդրեմ ի նկատի ունենաք և իմ այդ վերոհիշյալ հոգվածը:

Մնամ Զեզ հարգող Կարեն Միֆայելյան

17

9 օգոստոսի, 1930 թ.

Մոսկվա

Սիրելի պարոն Ա. Զոպանյան

Յաճում եմ, որ իմ խոստումը ես չկարողացա ինձանից անկախ պատճառներով ժամանակին կատարել: Բանն այն է, որ ինձ համար անսպասելի կերպով ես ստիպված էի մի գործողության համար երկու շաբաթով պառկել հիվանդանոցում: Միայն երկու օր առաջ դուրս եկա: Ինձ առայժմ շատ թույլ եմ զգում և հաղիվ կարողացա այսքանը ուղարկել: Զեր բացիկը ստացա: Քերևս, եթե ուշ չի, առաջիկա համարին տեղ տաք այսքանը, շարունակությունը թողնելով հետագա համարին: Մինչև 5 օր կուղարկեմ և շարունակությունը: Մնամ ձեզ հարգող ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ:

Օգոստոսի 20-ին պաշտոնով մեկնում եմ 2 ամսով Հայաստան:

Հասցեն՝ Երևան, կարմիր խաչ:

<4. Միֆայելյան>

18

5 նոյեմբերի, 1930 թ.

Մոսկվա

Սիրելի պ. Ա. Զոպանյան

Այսօր վերջապես Մոսկվայից ուղարկեցի խոստացածս հոգվածը «Արվեստների օլիմպիադի» մասին և բազմաթիվ նկարներ: Պողոսյանը՝ երկի պատմած կլիների, թե ինչու ուշացավ: Մոսկվայում ես կարողացա այդ հարցը վերջացնել:

Հայաստանն այս անգամ ինձ վրա շատ լավ տպավորություն թողեց, ավելի քան երբևէ: Երևք տարի է չէի եղել այնտեղ: Կատարված հսկայական շինարարությունն ինձ ուղղակի ապշեցրեց: Նախ Երևանը մի անճանաչելի քաղաք է դառել: Մի քանի տարի ևս և նա կդառնա եվրոպական իմաստով մի կոկիկ քաղաք: 9 հատ բարձրագույն դպրոց կա, մեծ քանակությամբ մտավորականություն, ուսանողություն, հանրային գրադարանը 500000 գիրք ունի, բոնում է իր գրքերի քանակով առաջին տեղը Անդրկովկասի մեջ, իսկ թանգարանը իր նկարների արժեքով՝ 4-րդ տեղը ամբողջ Միության մեջ և առաջին տեղը՝ Անդրկովկասում: Զորագետև և Քանաքեռի հիդրոկայանը հսկայական

տպավորություն է թողնում, Ոռոգման համար ահագին աշխատանքներ են թափված, շինված են և շինվում են բազմաթիվ գործարաններ, լեռնականի տեքստիլը, իր 5—6000 բանվորներով, որ 90 տոկոսով որբեր են, արդեն խոշոր ինդուստրիա է։ Գտնված են պղնձի նոր հանքեր, որից հետո Հայաստանը իր պղնձի հանածոյով կրճնի առաջին տեղը Միության մեջ։ Պեմզան և տուֆը, ինչպես և մարմարյունը խոշոր արդյունաբերական միավորներ են։

Մասնագետների և մտավորականների մեջ կան քառիս բուն իմաստով իրենց գործին նվիրված ֆանատիկոսներ։ Ամեն մարդ գիտե, թե ի՞նչ է անում և ինչի համար է աշխատում։ Արդեն մշակվում է մի նոր նկարագիր հայաստանացու քաղաքացու, որ ունի իր տեսակետը, կամքը և վերաբերմունքը դեպի իր հայրենիքը և այնտեղ կատարվող աշխատանքները։

Ինձ թվում է, թե մի այսպիսի վերելք մեր երկրի համար, այսքան կարճ ժամանակամիջոցում անսխալ ենթաց է։ Անշուշտ դա հնարանք է և գումարների այն հսկայական հոսանքին, որ իր սկիզբն է առնում Մոսկվայից, Հայաստանը այսպիսի գումարներ երբեք չի երազել։ Այս տարի Հայաստանում ծախսվել է մոտ 65 մլն ռուբլի շինարարության վրա։

Մեծ բավականություն պատճառեցին ինձ այն շենքերը, որոնք շինված են մեր արտասահմանյան հայ գաղութների միջոցներով և որոնց ծրագրմանը որոշ մասնակցություն ունեցավ այն պատվիրակությունը, որի անդամներից մեկն էի ես...

Սակայն... այդ ամենը տեսնելով մի բան ես մտածում, որքան քիչ է այս, համեմատած այն ամենի հետ, որ արել է խորհրդային իշխանությունը և որքան շատ բան կարող են անել մեր գաղութահայերը և շեն անում։ Նրանք գործում են այն քաղաքական խոշոր սխալը, ինչ-որ իրենց ժամանակին արավ ռուսահայ բուրժուազիան։ Այդ Ռուսաստանը թմբկահարող բուրժուազիան,— ամոթ է ասել,— ոչ մի հետք չի թողել իր հայրենի երկրում. ոչ մի ձեռնարկություն, ոչ մի շենք։ Անգամ էջմիածինը, որ հարյուր միլիոնի կարողություն ուներ...

Ես շատ կուզեի, որ առաջիկա կաթոլիկոսի ընտրություններին դուք գալիք և Զեռ աշքերով տեսնեիք կատարվածը։

Թժիշկ Կամսարականի հետ միասին Հայաստանի և կարմիր խաչի առաջիկա տասնամյակները առիթ բռնելով, մի քանի նամակներ ուղղեցինք Բարեգործականին, պ. Գյուլպենկյանի ժառանգներին, Նորատունկյանին և այլոց, որ իրենց տրամադրության <տակ> եղած գումարներից Հայաստանում նոր շենքեր շինեն հավերժացնելով այդ տոները։ Պողոսյանին հանձնարարեցինք, որ այդ մասին խոսի, ում հետ պետք է։ Զգիտե՞ք ինչ պատասխան կատանանք։ Սպասում ենք, եղած ձեռնարկությունները ապացուցեցին, որ նվիրարեքված ամեն մի կոպեկը գործադրվում է նպատակին ու չի կորչում ի՞նչ են մտածում մեր մեծահարուստները... Մի՞թե մի րոպե չեն մտածում այն բանի մասին, որ երկիրը շինվում է առանց իրենց մասնակցության։ Ախ, ինչ լավ կլինի, որ ինքնասիրություն ունենային։

«Անահիտ» վերջին համարները շեմ ստացել։ Աշոտ Հովհաննիսյանը, որ աշխատում է Մոսկվայի Կարլ Մարքսի և Ֆ. էնգելսի ինստիտուտում, խնդրեց, որ մի-մի օրինակ ուղարկեք այդ ինստիտուտի հասցեով իրեն։ Ինձ

հասանելիք գումարը կարող եք ուղարկել նրան, նրա հասցեն այսպես է. Մոսկվա, ինստիտուտ 4. Մարքսի և Զ. էնգելսի, Ա. Հովհաննիսյանին:

Հասցեն կարող եք գրել ֆրանսերեն...

Մնաք հարգանքներով

Հասցես նույնն է 4. Միֆայելյան

Ր. Տ. Ուղարկում եմ մեկ օրինակ իմ պատմվածքների ժողովածուից ռուսերեն լեզվով, որը լույս է ընծայել Ռուսաստանի պետական հրատարակչությունը:

Նույնը

19

<1930 թ.>

<Մոսկվա>

Մեծարգո պարոն Գաբրիել Նուրառունկյան

Մեր փարիզ գտնված ժամանակ քանիցս առիթ ունեցանք Ձեզ հետ տեսնվելու և խորհրդակցելու այն աշակցության մասին, որ արտասահմանի մեր հայ գաղութները կարող են հայտնաբերել խորհրդային Հայաստանի շինարարության մեջ: Այդ օրերից անցել է ընդամենը մի քանի տարի: Նորերս մենք առիթ ունեցանք շրջագայելու Հայաստանը և ականատես լինելու այն խոշոր շինարարության, որ կատարված է մեր երկրի մեջ: Մասնավորապես Հայաստանի մայրաքաղաքը՝ Նրևանը, շատ կարճ ժամանակամիջոցում կղաղնա մի գեղեցիկ քաղաք, եվրոպական իմաստով:

Այդ ամենի մեջ դուք պիտի համոզվեք անձամբ, <եթե> պատեհություն ունենաք այցելելու Հայաստան: Նոր շենքերի մեջ իրենց պատվավոր տեղն են գրավում Մարի Նուբարի¹ և Դարումի Հակոբյանի² անունով կառուցված հաստատությունները, Ամերիկահայ տունը, խերյան³ մեղվաբուծական դպրոցը, որ շինվեց Ձեր աշակցությամբ և այլն: Սակայն ցավելով նկատեցինք, որ արտասահմանի տված տուրքը Հայաստանի վերաշինությանն այնչէ, ինչ որ կարելի է սպասել:

Այն բոլոր շենքերը, որ կառուցված են, մի շնչին մասն է այն նկրտումների, որ կատարել է խորհրդային իշխանությունը մեր երկրի մեջ: Այս հանգամանքը առիթ տվեց մեզ, օգտվելով պ. Հովհաննես Պողոսյանի ներկայությունից, դիմելու Ձեզ մի գումարի գործադրության մասին ևս, որ գտնվում է Ձեր տնօրինության ներքո: Դա Մանասարյանի փարիզում մնացած գումարն է, որի մասին մի քանի անգամ առիթ ունեցանք Ձեզ հետ խորհրդակցելու:

Մանասարյան դատի մանրամասնություններին և կարմիր խաչի կատարած դերի մասին այդ խնդրում դուք կտեղեկանաք պ. Հովհաննես Պողոսյանից:

Մեր կարծիքով հասել է այն պատեհ ժամը, երբ արդեն կարող եք հավերժացնել նրա հիշատակը մի գեղեցիկ շենքով Հայաստանի մեջ՝ ծառայեցնելով Հայաստանի խորհրդայնացման և Հայաստանի կարմիր խաչի գոյության 10-ամյակներն իրեն առիթ Ձեր այդ մտադրության⁴:

* Մեր կարծիքով կտակի ոգին չպիտի <խանգարի> և ներկա պահանջներին միանգամայն կհամապատասխանեն, եթե այդ գումարով դուք ձեռնարկեք մի շենքի կառուցման և տրամադրեք Հայաստանի դուրդատնեսական ինստիտուտի կարիքներին:

Մարի Նուբարի, Դարումի Հակոբյանի, հերյանի և այլ գումարների ճշգրիտ գործադրությունները և նրանց տված հսկայական աջակցությունը Հայաստանի ժողովրդին գեղեցիկ առհավատչյաներ են, որ նույն վիճակը պիտի ունենա և Թանասարյան հաստատությունը:

Մանրամասնություններն այդ մասին Ձեզ անշուշտ կհաղորդի պ. Հովհաննես Պողոսյանն անձամբ:

Հայաստանի կարմիր խաչն իր վրա կվերցնի շինարարության կառուցման հսկողությունը, իսկ հետագա պահպանությունը՝ լուսավորության կոմիտեի ատլը: Որպեսզի ծախսված դրամը տա իր ցանկալի արդյունքը ծրագրված շենքի կատարման խնդրում, կարմիր խաչը կանի կարևոր թելադրություններ: Դրա համար անհրաժեշտ է միայն ունենալ Ձեր նախնական սկզբունքային որոշումը: Լիահույս, որ այս դիմումը չպիտի թողնեք անհետևանք:

Մնամ խորին հարգանքներով բժ. Ս. ԿԱՄՍԻՆԿԱՆ

(նախ. Հ. Կ. խաչի)

Կարեն Միքայելյան

(ներկայացուցիչ կարմիր խաչերի միութենական
գործադիր կոմիտեի):

20

7 հոկտեմբերի, 1931 թ.

Մոսկվա

Սիրելի Ջարենց

Քո ուղարկած հեռագիրը Կուլիվերի թարգմանության մասին ստացա, ուր գրում ես, որ թարգմանությունը կատարեմ անգլիականի համեմատությամբ: Փորձեցի այդպես թարգմանել, բայց ոչինչ չի դուրս գալիս: Անգլիականի և ռուսականի մեջ այնքան տարբերություններ կան, որ երբ հետևում ես ռուսականին, թարգմանությունը հեռանում է բնագրից, իսկ երբ հետևում ես բնագրին, այն ժամանակ թարգմանությունը դուրս է գալիս անգլիականից և ոչ թե ռուսերենից, բնագրի համեմատությամբ, ինչպես դուք եք պահանջում: Եվ վերջապես, այդ համեմատական թարգմանությունից դուրս է գալիս կատարյալ շիլա-փլավ, ոչ այս, ոչ այն, այնպես որ ընթերցողը, եթե համեմատի, դուրս կգա մի գործ, որ ոչ այս է և ոչ այն: Երկար մտորումներից հետո ես թարգմանությունը դադարեցրի, թեև 100 երես ձեռագիր արդեն թարգմանել եմ: Այդ հարցի վերջնական որոշումը թողի պարզելու անձամբ, երբ կլինեմ Երևանում: Իսկ Երևան ես ուզում եմ մեկնել մի քանի օրից հետո, ուր կմնամ մոտ մի շաբաթ: Ուրեմն այդ բոլոր հարցերը պարզելուց հետո այդտեղ էլ կստորագրեմ պայմանագիրը: Քեզ երևի շփոթում է, որ հարկավոր է ավել վճարել բնագրից թարգմանելու համար, բայց ես հոժար եմ նույն գինը վերցնել, միայն թե այնպես լինի, որ ապագայում թարգմանության վերաբերյալ առարկություններ չլինեն: Հարկավոր է միայն ժամանակը ավելացնել:

Ուրեմն ցտեսություն Երևան

մնամ քո Կարեն

< Ե. Զարենցին >

Ուղարկում եմ Գուլիվերի ճանապարհորդությունների առաջին մասը — լիփպուտների աշխարհում: Վերջերս ինձ հաջողվեց գտնել անգլիական ավելի լավ բնագիր. այնպես որ կարողացա բնագրից թարգմանել և երկու առաջաբանները: Ամբողջ գիրքը թարգմանում եմ բնագրից, ձեռքիս տակ ունենալով նաև ռուսական թարգմանությունը: Տարբերություններ իհարկե շատ կան, սակայն բնագրին հարազատ իմ թարգմանությունն է: Թարգմանությանս մեջ աշխատել եմ պահպանել Սվիֆտի ոճը, դարձվածքները, երկար պարբերությունները, կոլորիտը հարազատությանմբ: Կան տեղեր, ուր ես լեզվին դիտմամբ տվել եմ արխաիկ-գրաբարաձև թեքում, մանավանդ այն տեղերը, որոնք վերաբերում են թագավորներին, արքունիքին: Կետադրությունը, մանավանդ միջակետերի շատությունը, պահպանել եմ այնպես, ինչպես բնագրի մեջ է: Ինչ վերաբերում է տրանսկրիպցիային, այնտեղ ուր բերված են լիփպուտների խոսքերը, տառադարձությունը թողել եմ լատինականը, ինչպես այդ ընդունված է համաշխարհային այլ գրականության մեջ, իսկ հատուկ անունները, թեկուզ լիփպուտներինը, տառադարձել եմ այնպես, ինչպես հատուկ է անգլիական լեզվին:

Լիփպուտ երկրի անուն է և ոչ ժողովրդի: Բայց որովհետև այդ անունը շատ ժողովրդականացած է իբրև ժողովրդի անուն, ուստի ես ստիպված եղա թողնել այդ սխալ թարգմանությունը:

Լիփպուտը, իբրև երկիր, ռուսերենի մեջ թարգմանված է Լիփպուտիա, իսկ ես թարգմանեցի Լիփպուտիստուն, համարելով, որ այդ ձևը ավելի հատուկ է միջնադարին, քան իա մոգեռն ռուսերենից առած մասնիկը:

Այն ծանոթությունները, որոնք պիտի թարգմանվեն ռուսերենից, ես համարակալել եմ տեքստի մեջ, իսկ այն ծանոթությունները, որոնք ես եմ մտցրել, աստղանիշով զետեղել եմ նույն էջի վրա: Համարակալած ծանոթությունները պիտի զետեղվեն գրքի վերջը:

Թարգմանությանս նորմաներն առայժմ կատարում եմ, հունվարին կուղարկեմ երկրորդ մասը, իսկ ինտրովարին ինձ ուղարկում են Սլրբի և Ուգրեկստան երեք շաբաթ ժամանակով, այնպես որ կարող է պատահել որ այդ ժամանակամիջոցում ուշանա և իմ աշխատանքիս ավարտումը: Կարծում եմ առարկություն չի լինի Ձեր կողմից:

Այնուհետև, ի նկատի ունենալով աշխատանքի դժվարությունն ու դրամական միջոցներիս պակասը, կխնդրեի մի 400 ռուբլի ևս բաց թողնել ինձ ի հաշիվ իմ աշխատանքի, որպեսզի ես ստիպված չլինեմ այլ աշխատանք վերցնելու, մանավանդ, որ այդպիսի առաջարկ ունեմ ես Վահանյանից: Գրամ ստանալու հավատարմագիր ես կուղարկեմ Հակոբ Քոչարյանին², Նթե մի որևէ դիտողություն ունեա թարգմանության վերաբերյալ, խնդրեմ անհապաղ գրիր, ի նկատի ունենալու համար:

Հնկերական բարևներով՝ Կուրեն

22

11 ապրիլի, 1933 թ.

Մոսկվա

Սիրելի Չարենց

Արդիւն մի ամիս կլինի, ինչ իմ երկերի ժողովածուն ուղարկել եմ քեզ, սակայն ոչ մի լուր չստացա, որդո՞ք տեղ հասավ, թե ոչ կամ թե չէ ինչ վիճակի մեջ է տպագրութեան հանձնելու գործը և մոտավորապէս ինչ ժամանակ կարող է լույս տեսնել։ Առաջաբան գրող պետք է լինի, թե՞ ոչ։

Հետաքրքրական է նաև, թե երբ լույս պիտի տեսնի Գուլիվերը։

Այնուհետև խնդրել էի, որ ի հաշիվ հոնորարների մի որոշ գումար ուղարկել տաս, վասնզի դրամի կարիքս շատ հույժ է։

Չգիտեմ քո գրական գործունեության հոբելյանը տոնեցի՞ն, թե ոչ։ Թեև ամեն մի հոբելյան, իր բոլոր դրական կողմերով հանդերձ, մի անուղղակի ատեստացիա է հոբելյարի ծերութեանը, բայց քո նկատմամբ կարող եմ ասել, որ դեռևս այդ զգացումը չկա իմ մեջ, դեռ իմ աչքում դու շատ ջահել ես— ինչդրեմ իզաբելլայի մոտ չսարժենաս, որպեսզի քեզ վրա նայեմ իբրև հոբելյարի։ Այդ իսկ պատճառով, հրաժարվելով տրադիցիոն շնորհավորանքներից, կարող եմ քեզ միայն մին բան ասել—գրիր, գրիր և գրիր ու պակաս ժամանակ կորցրու վարչական գործերի վրա, որովհետև ես դրա զոհն եմ և շատ լավ գիտեմ, թե ինչ շարիքներ են թաքցնում այդ զբաղմունքները գրող մարդու համար։

Ողջ լիւր ու բարեկեցիկ իզաբելլային ու համբուրիի իմ կողմից աղջկադ։

Մնամ քո Կարեն

23

<1934>

Սիրելի ընկ. Գուրեգին

Էնցիկլոպեդիայի համար ուղարկում եմ քո խնդրած հոդվածը Անտոկուսկու մասին։ Կարծում եմ այդքանը բավական է։ Աչքի անցկացրի քո Հայկական մամուլը¹, խոշոր գործ է և անհրաժեշտ։ Յավում եմ միայն, որ կան մի շարք անձնություններ։ Դրանցից մի քանիսը մատնանշեց Կարինյանը։ Մեկն էլ կարող եմ ասել ես, հոսքս «Գարուն» ամսանախին է վերաբերում։ Իբրև խմբագիրներ հիշել ես—Մակինցյան, հանդադրյալ և Տերյան։ Միանգամայն սխալ է։ Խմբագրությունը մի խմբակ էր, որի մեջ մտնում էին Մյասնիկյան, Ալ. Ռուբենի², Կարեն Միքայելյան, Վահան Տերյան և Յուլիա հանդադրյալ, Մակինցյանը չուղեց մտնել կոլեգիայի մեջ։ Բայց որովհետև նա հետագայում հաճախում էր, մենք որոշեցինք նրան ընդունել չորրորդ գրքից սկսած, որ այնպես էլ լույս չտեսավ։ Փաստական աշխատանքները տարել եմ ես Վահանի հետ, ինչ-որ ցույց է տալիս արխիվը, որ այժմ իր ձեռքի տակ է։ Վերջապես խմբագրության հասցեն գրքի մեջ իմ հասցեն է։ Մի՞թե այդ ամենը հայտնի չէր քեզ։ Այնպես էլ իմ ձեռնարկությունն էր և անունն էլ ես եմ դրել։ Ի՞նչ է եղել, որ մի շարք անուններ անտես ես արել, չգիտեմ։ Չլինի թե Մյասնիկյանի և Ռուբենու հետ միասին ինձ էլ համարելով սպեցի-

Ֆիկ, որոշել են հանել մեր անունները որոշ դիտավորություններով, Հետաքրքրական էր լսել քո կարծիքն այդ մասին:

Բարեններով Կարեն

ՄԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

1. «Գարուն» — գրական-գեղարվեստական այմանախ, հրատարակվել է 1910—1912 թթ. Մոսկվայում. խմբագրական հանձնաժողով՝ Վ. Տերյան, Ա. Մատուրյան, Յ. Խանզադյան, Ալ. Մյասնիկյան, Կ. Միքայելյան և ուրիշներ:

2

1. Խոսքը «Գարուն» այմանախի երկրորդ զրթի մասին է:

5

1. Բայմոնտ Կոստանտին Դիմիտրովիչ (1867—1942) — ռուս քանաստեղծ, թարգմանիչ, թարգմանել է Շոփ. Քոմանյանից, Ավ. Խաչատրյանից, Վ. Տերյանից և ուրիշ քանաստեղծներից, որոնք զետեղված են 1916 թ. Վ. Բրյուսովի կազմած՝ «Հայ պոեզիան Նազույն ժամանակներից մինչև մեր օրերը» ռուսերեն անթولوجիայում:

7

1. Գեղասիրաց ընկերություն — կազմակերպվել է 1916 թ.:

8

1. Տիգրան Հովհաննիսյան (1865—1921) — իրավաբան, թարգմանիչ, հասարակական գործիչ:
2. Խոսքը Վահան Տերյանի մասին է:

9

1. Տեր-Անդրեասյան Մխիթար — քիմիկ-ինժեներ, բարձրագույն կրթությունն ստացել է Փարիզում, պաշտոնավարել է Թիֆլիսում և Բաքվում: Հմուտ լինելով անգլերենի իմացության մեջ, օգնել է Հովհ. Քոմանյանին՝ Հովհ. Մասեհյանի շեքսպիրյան թարգմանությունների վերաբերյալ քննական հոդվածներ գրելու:

2. Խոսքը Դերենիկ Դեմիրճյանի մասին է:

3. Լևյի (Սահակյան — Տեր-Մկրտչյան Փառանձմ, 1892—1951) — քանաստեղծուհի, թարգմանչուհի: 1959 թ. տպագրվել է նրա «Կարոտ» ժողովածուն, Թարգմանել է Ս. Մխիթարովի «Առանկները»:

4. Նվարդ Թումանյան (1892—1957) — Հովհ. Քոմանյանի դուստրը, գրականագետ, գրել է մի շարք գործեր Հովհ. Քոմանյանի կյանքի և ստեղծագործության մասին:

10

1. Թեքեճյան — հասարակական գործիչ, աշխատել է Հայաստանի օգնության կոմիտեում:

2. Թերզյան Հակոբ — պատմաբան, քանասեր, հասարակական գործիչ, մասնակցել է Հայաստանի օգնության կոմիտեի աշխատանքներին, գրել է «Սատանայի կյանքը» (Կ. Պոլիս, 1909), «Կիլիկիո աղետը», Ա, Բ, Գ, Դ մաս (Կ. Պոլիս, 1910—1912):

3. Կարապետ Կոստանյան (1849—1920) — լուսագետ, մանկավարժ: Պաշտոնավարել է Կոնստանդնուպոլսի և Լազարյան ճեմարաններում իբրև տեսուչ, Ուսումնասիրել է հայ միջնադարյան քանաստեղծներին, հրատարակել է մենագրություններ, նրա առավել կարևոր աշխատություններից է «Գրիգոր Մազիստրոսի թղթերը» (Ալեքսանդրապոլ, 1910):

4. Փուշման Հովսեփ (1877—1966) — կարիլ, հասարակական գործիչ, Հայաստանի օգնության գործում ակտիվ ղեկ է կատարել:

11

1. Նկատի ունի 1926 թ. լենինականում տեղի ունեցած երկրաշարժը:

12

1. Սանասարյան Մկրտիչ (1818—1890)—Վանից Թիֆլիս գաղթած ծնողների զավակ, մոր կողմից Գևորգ Աթորունու թոռը, սովորել է Նիրսիսյան դպրոցում, սպայական աստիճանով մասնակցել է Շամխի դեմ մղված կռիվներին, ղորացրվելով հաստատվել է Պետերբուրգում և գրադվել վաճառականությանը: Հետագայում եա դառնում է «կապկազ և Մերկուրի» եավային ընկերության ղեկավարը:

Հայազետ Կարապետ Նզյանի խորհրդով 1886 թ. Սանասարյանը իր կարողությունը կտակում է հայ հասարակությանը: Կտակը գործադրելու հատուկ կանոնադրություն է մշակվում: Հիշյալ միջոցներով հիմնվում է Կարինի Սանասարյան վարժարանը. հռոակոսիս գյուղի Մարիամյան իգական դպրոցը, նպաստներ են տրվում գրողների, խմբագիրների, ուսանողների, առանձին դպրոցների, գրադարանների, գրքերի տպագրության և այլն: Ինչպես համաշխարհային պատերազմը, այնպես էլ հայկական շարժերը Թուրքիայում խափանում են հիշյալ կտակի գործադրությանը և զանակները: Թուրքական կառավարությունը բռնագրավում է այդ գումարները: Կ. Պոլսի Հայկական պատրիարքը դիմում է դատարան ետ ստանալու Սանասարյան ժառանգությունը:

2. Նորատուրկյան Գարբիել (1859—1936)—պետական և հասարակական գործիչ, Թուրքիայի արտաքին գործերի և հանրային շինարարության մինիստր, Հայկական բարեգործական ընկերության մասնաճյուղի նախագահ (Կ. Պոլիս), հույս տալով քաղաքական հետապնդումից, հաստատվում է Փարիզում: Այնուհետև ակտիվորեն մասնակցում է ֆրանսաւայ գաղութի հասարակական կյանքին:

14

1. Կամսարական—րծիշկ, Հայաստանի կարմիր խաչի վարչության նախագահ:

15

1. Պողոսյան Հովհաննես—գրող, բանասեր, հասարակական գործիչ, մասնակցել է Հայաստանի օգնության ֆոնդին: Գրել է «Փոլսոյի երգը» (Կ. Պոլիս, 1929), «Երկու ամիս Հայաստանի մեջ» (Իստան, 1931), «Պայքար Հ. Բ. Ը. միտքյան դեմ» (Կարիբ, 1934):

19

1. Մարի Նուրարի—Պոլսոս Նուրարի դուստրը, մասնակցել է Հայաստանի օգնության ֆոնդին, նրա հատկացրած միջոցներով կառուցվել է Երևանի ակնարութական կլինիկան:

2. Դարումի Հակոբյան—քանդակագործուի, դրամական զգալի միջոցներ է հատկացրել Հայաստանի օգնության ֆոնդին:

3. Խերյան—օգնել է Հայաստանի օգնության կոմիտեին՝ նյութական միջոցներով:

21

1. Վահանյան Վաղարշակ—կուսակցական-հեղափոխական գործիչ, ճղել է «Под знаменем марксизма» ամսագրի գլխավոր խմբագիր: Գրել է Պեխանովի հայացքների և պրոլետարական կուլտուրայի մասին գիտական աշխատություններ:

2. Հակոբ Քոչարյան—հասարակական և մշակութային գործիչ, աշխատել է հայպետությանում որպես խմբագիր:

23

1. ՈՀայոց պարբերական մամուլը. լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794—1934)», կազմեց Խարեզին (Լեռյան, Երևան, 1934):

2. Իուրենի—Ալեքսանդր Մաաւոյան (Մատուր):